ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 սեպտեմբերի 2021 թվականի N 332-Ա

Ա. ԲԱՎԵՑԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 163-րդ հոդվածների, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշումը և *Ա. Բավեյանի* անձնական դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի N 14 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Անդրանիկ Բավեյանին*** տրամադրել 2021 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդի չօգտագործած մասը՝ 15 աշխատանքային օր, 2021 թվականի սեպտեմբերի 22-ից մինչև հոկտեմբերի 8-ը ներառյալ:

2. ***Անդրանիկ Բավեյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի N 14 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ *Էլինա Մելքումյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021 թվականի սեպտեմբերի 17
ք. Հրազդան